ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ
ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱՎԻՃԱԿԸ և ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Պետական օժանդակության հետ կապված հարաբերությունները ներկայումս կարգավորվում են միայն «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16.1-ին հոդվածով, ինչը բավարար չէ ոլորտի նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու համար:

Բացի այդ, ներկայումս առկա են մի շարք խնդիրներ պետական օժանդակության տրամադրման թափանցիկության ապահովման ոլորտում, որոնք հնարավորություն չեն տալիս ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով) իրականացնելու արդյունավետ վերահսկողություն պետական օժանդակության նկատմամբ:

Ավելին, Օրենքի՝ պետական օժանդակության նկատմամբ վերահսկողությանն առնչվող դրույթների կատարելագործման և պետական օժանդակության միասնական գրանցամատյան վարելու անհրաժեշտությունը կարևորում են Հայաստանի Հանրապետության հետ համագործակցող միջազգային գործընկերները՝ Համաշխարհային բանկը և Եվրոպական Միությունը, որի կապակցությամբ պետական օժանդակության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու և պետական օժանդակության միասնական գրացնամատյան վարելու անհրաժեշտությունն ամրագրվել է՝

- ✓ որպես հենանիշային պայման Հայաստանի Հանրապետության և Համաշխարհային բանկի միջև նախատեսված «Զարգացման քաղաքականության գործառնություն» բյուջետային աջակցության (DPO) վարկի տրամադրման ծրագրի շրջանակում,
- ✓ Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական Միություն-Համաշխարհային բանկի խմբի համագործակցության «Հայաստանին միանգամյա աջակցության 2017-2020» ծրագրի (Proposal for the World Bank Group-European Union Partnership Armenia Single Support Framework 2017-2020 Economic Governance) շրջանակում որպես նախապայման,
- ✓ «ԵՄ-Հայաստան համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» կիրակման նպատակով՝ Հայաստանի Հանրապետության պարտավորություն՝ վարելու պետական օժանդակության վերաբերյալ միասնական գրանցամատյան:

Հարկ է նաև հավելել, որ Ազատ և բարեխիղճ մրցակցություն ապահովելու նպատակով ԵԱՏՄ պայմանագիրը սահմանում է անդամ պետությունների կողմից ֆինանսական սուբսիդիաների տրամադրման միասնական կանոնների սահմանման և խիստ անհրաժեշտության և հիմնավորվածության դեպքում սուբսիդիաների տրամադրման պահանջներ, իսկ ԵԱՏՄ անդամ պետությունների համար սահմանված է պարտականություն սահմանված ժամկետում յուրաքանչյուր տարի ներկայացնել տեղեկատվություն նախատեսվող սուբսիդիաների մասին: Այսինքն՝ պետական օժանդակության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն սահմանելու և տրամադրվող պետական օժանդակությունների վերաբերյալ միասնական տեղեկատվական բազա ունենալու նպատակահարմարությունը բխում է նաև ԵԱՏՄ պայմանագրի դրույթների արդյունավետ կատարման անհրաժեշտությունից:

Հանձնաժողովն ուսումնասիրել է նաև պետական օժանդակության նկատմամբ վերահսկողության միջազգային փորձը:

Պետական օժանդակության նկատմամբ վերհսկողություն իրականացնելու և այն արգելելու իրավասություն ունեն Եվրոպական Հանձնաժողովը, Ռուսաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի, Չինաստանի, Մակեդոնիան, Քենյայի, Մեքսիկայի, Պակիստանի և այլ պետությունների մրցակցային մարմինները, իսկ Բրազիլիան, Արգենտինան, Պերուն, Նորվեգիան, Ավստրալիան, պետական օժանդակության նկատմամբ վերահսկողություն է իրականացվում այսպես կոչված «մրցակցության չեզոքության սկզբունք»-ի (competition neutrality principle)1 հիման վրա, որի կիրառման միջոցով ապահովվում է հավասարակշռությունը մրցակցության և պետական օժանդակության միջև:

Պետական օժանդակության նկատմամբ վերահսկողություն վերաբերյալ իրենց դիրքորոշում են հայտնել նաև միջազգային առաջատար կազմակերպությունները: Մասնավորապես, Տնտեսական համագործակցության կազմակերպությունը (OECD)[2], ՄԱԿ-ի առևտրի և զարգացման հարցերով համաժողովը (UNCTAD)[3] և Միջազգային մրցակցային ցանց (International Competition Network)[4] իրենց մի շարք զեկույցներում և կլոր սեղան քննարկումների ընթացքում անդրադարձել են

---

[1] «Մրցակցության չեզոքության սկզբունք»-ը ենթադրում է պետական մասնակցությամբ իրավաբանական անձանց և մասնավոր ոլորտի տնտեսվարող սուբյեկտների միջև հավասար մրցակցային պայմաններ ապահովելու անհրաժեշտությունը՝ պետական մասնակցությամբ իրավաբանական անձանց կամ պատվիրակված գործառույթ իրականացնող տնտեսվարողներին արտոնություններ չտալու կամ տալու դեպքում նույն արտոնությունը սահմանված չափանիշներին բավարարող մասնավոր տնտեսվարող սուբյեկտներին տալու, բոլորի համար համահավասար կարգավորումներ սահմանելու, ինչպես նաև պետական գնումների, սակարկումների և հրապարակային աճուրդների ժամանակ արդար մրցակցային պայմաններ ապահովելու միջոցով:

[2] https://www.oecd.org/competition/abuse/2731940.pdf; http://www.oecd.org/competition/sectors/48070736.pdf

[3] http://unctad.org/en/docs//ditcclp20034_en.pdf ; http://unctad.org/meetings/en/SessionalDocuments/tdrbpconf8d7_en.pdf; http://unctad.org/sections/wcmu/docs/c2clp_ige7p30_en.pdf, http://unctad.org/en/Docs/itcdtab2_en.pdf

[4] http://www.internationalcompetitionnetwork.org/uploads/library/doc1120.pdf; http://www.internationalcompetitionnetwork.org/uploads/library/doc1138.pdf

պետական օժանդակության նկատմամբ վերահսկողության հարցին՝ նշելով, որ պետական օժանդակության տրամադրումը կարող է հանգեցնել շուկաներում մրցակցության խաթարման և սահմանափակման, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է պետական օժանդակության նկատմամբ վերահսկողություն և համապատասխան կարգավորումների և տեղեկատվական բազայի սահմանում, իսկ պետական օժանդակության տրամադրումը պետք է լինի հիմնավոր, նպատակային և թափանցիկ:

Այսպիսով, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ նաև՝ Նախագիծ) ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում պետական օժանդակության ոլորտում թափանցիկություն ապահովելու և պետական օժանդակության նկատմամբ վերահսկողության իրականացման արդյունավետությունը բարձրացնելու, տրամադրված պետական օժանդակությունների վերաբերյալ միասնական տեղեկատվական բազա ստեղծելու անհրաժեշտությամբ:

Բացի այդ, Նախագծի ընդունման անհրաժեշտությունը բխում է Եվրոպական Միություն և Համաշխարհային բանկի հետ հարաբերություններում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Հարկ է ընդգծել, որ պետական օժանդակության վերահսկողության արդյունավետ կարգավորման մեխանիզմի ներդնումը ունի նաև կարևոր նշանակություն «զսպումների և հակակշիռների» (checks and balances system) համակարգի կատարելագործման միջոցով ժողովրդավարության զարգացման, արդյունավետ վերահսկողական մեխանիզմների ներդրման և կոռուպցայի դեմ պայքարի տեսանկյունից:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲՆՈՒՅԹԸ

Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորություններին համապատասխան հստակեցվում և լրամշակվում են պետական օժանդակության հասկացությունը, սահմանվում է պետական օժանդակություն տրամադրող մարմնի հասկացությունը, պետական օժանդակությունների վերաբերյալ գրանցամատյան վարելու պահանջը, տրամադրված պետական օժանդակության վերաբերյալ տեղեկատվության ներկայացման պարտավորությունը և կարգը:

Նախագիծը լրամշակելու է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16.1-ին հոդվածով ամրագրված պետական օժանդակության վերաբերյալ գործող դրույթները՝ բարելավելով պետական օժանդակության նկատմամբ վերահսկողության կարգավորումները:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Նախագծի ընդունմամբ ակնկալվում է կատարելագործել Հանձնաժողովի կողմից պետական օժանդակության նկատմամբ վերահսկողության մեխանիզմները, ապահովել տրամադրվող պետական օժանդակությունների թափանցիկությունը և միջազգային պարտավորությունների կատարումը:

Բացի այդ, կստեղծվի միասնական տեղեկատվական շտեմարան, որը կներառի տեղեկություններ պետության կողմից տրամադրված և տրամադրվող բոլոր պետական օժանդակությունների, դրանց բնույթի, ուղղվածության, չափերի և այլ տվյալների վերաբերյալ: